

## ԿԱՐԳ

### «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՄԱՆԿԱԿԱՊԱՐՏԵԶԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են նախադպրոցական տարիքի երեխայի (այսուհետ՝ Երեխա)՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի մանկապարտեզ (այսուհետ՝ Մանկապարտեզ) ընդունելության հետ կապված իրավահարաբերությունները:

#### II. ԵՐԵՒԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

2. Երեխան Մանկապարտեզ ընդունվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի կանոնադրության պահանջներին համապատասխան՝ վճարովի հիմունքներով:

3. Մանկապարտեզ կարող են ընդունվել 2-ից մինչև 6 տարեկան Երեխաները:

4. Երեխայի ընդունելությունը Մանկապարտեզ իրականացվում է «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի հրամանով՝ Երեխայի ծնողի (ծնողների) կամ նրա օրինական ներկայացուցչի (ներկայացուցիչների) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ իրավական ակտերի և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. Երեխայի ընդունելությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Մանկապարտեզում ձևավորված խմբերում ազատ տեղերի առկայության դեպքում՝ նախապես հերթագրված երեխաների ցանկից: Հերթագրումը կարող է իրականացվել նաև էլեկտրոնային համակարգով:

5.1 Մանկապարտեզ ընդունվելու առաջնահերթության իրավունքից օգտվում են՝

1) առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն կամ երեք և ավելի երեխա ունեցող զինծառայող ծնողի (ծնողների) երեխաները,

2) Մանկապարտեզում և/կամ Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնասպորտային համալիր» հիմնարկի դպրոցում ընդգրկված քույր, եղբայր ունեցող երեխաները,

3) տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) աշխատակիցների երեխաները:

5.2 Մանկապարտեզի նախակրթարանում ընդունելությունը կատարվում է խաղահարցազրույցի հիման վրա:

### III. ԵՐԵՒԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Երեխային Մանկապարտեզ ընդունելու համար ծնողը կամ օրինական ներկայացուցիչը ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին,

2) բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք,

3) Երեխայի ծննդյան վկայականի և (կամ) անձնագրի բնօրինակը (առկայության դեպքում): Տնօրենի «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ Երեխայի ծննդյան վկայականի և (կամ) անձնագրի պատճենը պահպանվում է Երեխայի անձնական գործում,

4) Երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի անձնագրի բնօրինակը՝ համապատասխան պայմանագիր կնքելու նպատակով: Տնօրենի «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ Երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի անձնագրի պատճենը պահպանվում է համապատասխան պայմանագրի հետ,

5) 2 լուսանկար՝ 3X4 չափսի,

6) բժշկական տեղեկանք՝ երեխայի առողջության մասին,

7) Երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի ցանկությամբ այլ փաստաթղթեր: